տարակելով նրա լուսանկարը, ցանկանում ենք հրավիրել նրա վրա մասնագետների ուշադրությունը[2]։

«Աշխարհացույց Հայաստանեայց»-ը ժամանակագրական կարգով վեցերորդ հայկական քարտեզն է աշխարհում. նրանից առաջ լույս ընծայված քարտեզներից միայն երկուսն էին նվիրված Հայաստանին (հրատ. Վենետիկ, 1751 թ.), մնացածը «Համատարած Աշխարհացույց»-ներ էին (հրատ. Ամստերդամ, 1695 թ., 1696 թ.), իսկ մեկն էլ կրոնական էր՝ «Երկիր Աւետեաց կամ Պաղեստին» (հրատ. Վենետիկ, 1746 թ.)։

Դժվար չէ կռահել, թե ի՞նչ նպատակ էր հետապնդում Հայաստանի քարտեզի այս հրատարակությունը։ Շահամիրյանն ու նրա համախոհները երազում էին մայր հայրենիքը թուրք-պարսկական բռնակալ լծից ազատելու և այնտեղ հայկական հանրապետություն ստեղծելու մասին։ Նրանց կարծիքով այդ հնարավոր էր իրագործել հայ ժողովրդի ազատագրական պայքարի և դրսի ուժերի՝ Ռուսաստանի ու Վրաստանի ակտիվ օգնության շնորհիվ։ Ազատագրական պայքար սկսելու համար նրանք անհրաժեշտ էին համարում նախ և առաջ լուսավորել հայերին, առաջին հերթին երիտասարդությանը, ծանոթացնել նրանց իրենց հայրենիքի պատմության և աշխարհագրության հետ։ Հայ մարդիկ խորապես պետք է գիտակցեին ազատության ու անկախության նշանակությունը, օտար տիրապետության ու միապետական կարգի վերին աստիճանի վնասակար լինելը։ Հայ ժողովրդին լուսավորելու համար մատրասցիները լույս են ընծայում հայ իրականության մեջ իրենց նախորդը չունեցող քաղաքական-հրապարակախոսական երկեր՝ Մովսես Բաղրամյանի «Նոր տետրակ որ կոչի յորդորակ»-ը և Շահամիր Շահամիրյանի «Որոգայթ փառաց»-ը։ Այդ արժեքավոր ստեղծագործություններում խոսվում է հայ ժողովրդի պատմության, աշխարհագրության, հայկական պետականության կործանման պատճառների ու բազմաթիվ այլ հարցերի մասին, հայ երիտասարդությանը կոչ է արվում սթափվել ծուլության խորը քնից և կենքը ձեռքին կռվել հայրենիքի ազատության համար. վերջապես տրվում է ապագա Հայաստանի սահմանադրության նախագիծը։

«Աշխարհացույց Հայաստանեայց»-ը կարծեք հավելվածն է այդ մեծարժեք գրքերի, այն լրացնում է նրանց, օժանդակում ավելի լայն պատկերացում տալու ընթերցողներին հայոց երկրի, նրա բնակավայրերի, լեռների ու ջրերի, սահմանների, հարևան երկրների և, ընդհանրապես, այն ամենի մասին, ինչ

---

2 Քարտեզի մի այլ օրինակ պահվում է ՍՍՌՄ Արտաքին գործերի մինիստրության արխիվում, որի մասին դեռևս 1922 թ. համառոտ տեղեկություն է հրատարակվել «Նորք» ամսագրում Թագ. Ավդալբեգյանի «Հայ ազատագրական շարժման երկու հոսանք XVIII դարի վերջերում» հոդվածին խմբագրության կողմից տրված ծանոթագրության մեջ (վերջերս մեզ հայտնի դարձավ, որ այդ ծանոթագրության հեղինակը Ա. Գ. Հովհաննիսյանն է)։ Այնտեղ ճիշտ կերպով նշված է, որ «Մինչ այժմ անհայտ այդ քարտեզը նույնպես քաղաքական նպատակ ուներ և կարող է ըստ ամենայնի «Հորդորակի» հավելված նկատվել»։ Սակայն սխալ է տրված քարտեզի տպագրության թվականը՝ գրված է 1775, պետք է լինի՝ 1778 (տես «Նորք», գիրք առաջին, Երևան, 1922, նոյեմբեր-դեկտեմբեր, էջ 161—162)։ Չնայած այս ուշադրավ ծանոթագրության, հետագա ուսումնասիրողները համապատասխան ուշադրություն չնվիրեցին այդ քարտեզին։ Դոկտ. Ս. Տեր-Ավետիսյանը «Նյութեր Հնդկաստանի հայ գաղութի պատմության համար» (Երևանի պետական համալսարան, «Գիտական աշխատություններ», հատոր 13, Երևան, 1920, էջ 26) հոդվածում, Շ. Շահամիրյանի «Աշխարհացույց Հայաստանեայց»-ի վերաբերյալ համառոտ տեղեկություններ բերել է «Նորք»-ի խմբագրության վերոհիշյալ ծանոթությունից՝ կրկնելով տպագրության թվականի նույն սխալը։